Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

NCCA

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն

Հայաստանի ազգային կինոկենտրոն

Համահայկական մանկապատանեկան մրցույթ-փառատոն

Անիմացիոն ֆիլմերի պաստառներ

Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնը՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի հետ համատեղ և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, նախաձեռնել են **Անիմացիոն ֆիլմերի (մուլտֆիլմերի) պաստառների մրցույթ**: Այն նվիրված է Հայկական անիմացիայի 85-ամյակին և իրականացվում է հոբելյանական տարվա միջոցառումների շրջանակում: Մրցույթը նախատեսված է Հայաստանի, Արցախի և սփյուռքի երեխաների և պատանիների համար:

Հիմնական նպատակը երեխաներին մեր անիմացիայի հարուստ ժառանգությանը հաղորդակից դարձնելը, նրանց գեղարվեստական ճաշակը բարձրացնելն ու պաստառների ստեղծման ավանդույթներին, տեխնիկաներին և նորարարական մոտեցումներին ծանոթացնելն է: Ընտրվել է շուրջ 80 ֆիլմ՝ շեշտը դնելով հատկապես 1900-2000-ական թվականներին ստեղծված մեր «Ոսկե ֆոնդի» վրա:

Նախագծի շրջանակում երեխաները կմասնակցեն վարպետության առցանց դասերի, որոնք կվարեն ոլորտի լավագույն մասնագետները և տեսական ու գործնական գիտելիքներ և հմտություններ կփոխանցեն անիմացիայի, պաստառների և գրաֆիկ դիզայնի մասին: Նախագծի հիմնական շեշտադրումներից մեկը երեխաներին պաստառի էությանն ու այն ստեղծելու արվեստին ծանոթացնելն է, որպեսզի կարողանան իրենց ստացած գիտելիքները կիրառել նոր ձևաչափում:

Այնուհետև երեխաները կընտրեն իրենց դիտած անիմացիոն ֆիլմերից որևէ մեկն ու պաստառ կստեղծեն դրա վերաբերյալ: Ընթացքում հնարավորություն կունենան նաև խորհրդատվություն ստանալ մասնագետների կողմից: Հատկանշական է, որ մեր անիմացիոն ֆիլմերից շատերը չունեն պաստառներ, և այս նախագիծը հրաշալի առիթ է ևս մեկ անդրադարձ կատարելու մեր մոռացված հարուստ ժառանգությանը:

Լավագույն աշխատանքները կներկայացվեն ամփոփիչ ցուցահանդեսի տեսքով, որը Գեղագիտության ազգային կենտրոնի պատկերասրահում կբացվի 2023 թվականին:

Մրցույթ-փառատոնի մասնակիցներ.

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել **10-18 տարեկան** արվեստասեր և ստեղծագործական շնորհ ունեցող հայ մանուկներ և պատանիներ ամբողջ աշխարհից. Հայաստանի, Արցախի և սփյուռքի բոլոր տեսակի կրթօջախների սաները, ինչպես նաև պարզապես ստեղծագործող, սակայն որևէ մասնագիտական հաստատություն չհաճախող երեխաները:

Ընդունվում են բացառապես անհատական աշխատանքներ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե մասնակիցը ներկայացնում է որևէ կրթական հաստատություն, ապա հայտը պետք է ուղարկի տվյալ կրթօջախը:

Մրցույթ-փառատոնի անցկացման կարգ.

Առաջին փուլ՝ ***ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԱՆԻՄԱՑԻՈՆ ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ.***

05.04.2023 – 15.05.2023

Հայաստանի, Արցախի և սփյուռքի կրթօջախների սաները և անհատները կարող են գրանցվել առցանց հղման միջոցով.

հայերեն՝ https://forms.gle/bnV5K5RcEzFzx1ZF6

ռուսերեն՝ https://forms.gle/gBYec2c1TQ3nVDER7

անգլերեն՝ https://forms.gle/uBMTkwMTFK7bSUVD7

Գրանցված մասնակիցները անիմացիոն ֆիլմերը կարող են դիտել հետևյալ հղմամբ՝

https://drive.google.com/file/d/1pIEeJUPcU2rWHB5txomsaRr-wp5ePE-2/view?usp=share_link

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Համահայկական մրցույթ-փառատոնի մասնակիցը պարտավորվում է որևէ կերպով չտրամադրել և չփոխանցել երրորդ անձանց, աշխատանքային գործընթացը կազմակերպելու նպատակով, իրեն տրամադրված ֆայլերը, տեղեկատվությունը և այլ փաստաթղթեր կամ դրանք ուղղակի/անուղղակի կերպով հասանելի դարձնել երրորդ անձանց համար, ինչպես նաև օգտագործել դրանք ի շահ իրենց կամ երրորդ անձանց՝ առանց «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի նախնական գրավոր համաձայնության:

Սույն պահանջը խախտելու դեպքում՝ համահայկական մրցույթ-փառատոնի մասնակիցը պատասխանատվություն կկրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երկրորդ փուլ՝ ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ, ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ.***

23.05.2023 – 12.06.2023

Գրանցված մասնակիցներն առցանց դասընթացների միջոցով կծանոթանան հայկական անիմացիայի և պաստառների ստեղծման պատմությանը, տեխնիկաներին և մեթոդներին: Կկայանա առցանց հարց ու պատասխան և քննարկում մասնագետների ու մասնակիցների միջև:

Առցանց դասընթացների հոլովակները նախագծի ամբողջ ընթացքում հասանելի կլինեն Գեղագիտության ազգային կենտրոնի յութուբյան ալիքում՝ https://www.youtube.com/@nca_armenia743

Երրորդ փուլ՝ ***ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.*** **15.08.2023 – 15.09.2023**

Աշխատանքները պետք է ներկայացվեն էլեկտրոնային տարբերակով՝ nca.contemporary@gmail.com էլ. փոստի հասցեին:

1. էլեկտրոնային նամակում պետք է նշված լինի.

ա/ աշխատանքի անվանումը, ֆիզիկական չափերը և տեխնիկան,

բ/ հեղինակի անունը, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար,

գ/ նկարչություն դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար:

Չորրորդ փուլ՝ ***ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.***

15.09.2023 – 25.09.2023

Մասնագիտական հանձնաժողովի կողմից կընտրվեն այն աշխատանքները, որոնք կներկայացվեն ծրագրի ամփոփիչ ցուցահանդեսին:

Հինգերորդ փուլ՝ ***ԲՆՕՐԻՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ.***

01.10.2023 – 15.10.2023

Մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցադրման համար: Փոստային կնիքի ամսաթիվը պետք է դրված լինի 01.10.2023 – 15.10.2023 ժամանակահատվածում:

Պաստառների ներկայացման չափորոշիչները՝

Չափ՝ A2

Տեխնիկա, նյութեր՝ կոլաժներ՝ լուսանկարներով, գունավոր թղթերով, գունավոր մարկերներով, գուաշներով:

Պաստառը հաղորդակցության գործիք է: Այն օգտագործվում է ինչ-որ նյութի/ֆիլմի/մուլտիպլիկացիայի գովազդի, քարոզչության համար, ուստի պաստառները պետք է պարունակեն պատկերային և տեքստային տեղեկություններ (նվազագույնը՝ վերնագիր):

Չեն ընդունվում զուտ նկարչական աշխատանքներ:

Նախագծի ավարտին մասնագիտական հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված լավագույն աշխատանքները կցուցադրվեն Գեղագիտության ազգային կենտրոնի թանգարանում՝ հատուկ ցուցահանդեսով:

Մասնակիցներին կտրվեն մասնակցության վկայականներ, իսկ հաղթողներին՝ նաև մրցանակներ:

Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը.

N	Գործողություն/աշխատանք	Ժամկետ
	Առաջին փուլ՝ *գրանցում և անիմացիոն ֆիլմերի դիտում*	**05.04.2023 – 15.05.2023**
	Երկրորդ փուլ՝ *մասնագիտական առցանց դասընթացներ, հարց ու պատասխան և քննարկում մասնագետների հետ*	**23.05.2023 – 12.06.2023**
	Երրորդ փուլ՝ *աշխատանքների ներկայացում էլեկտրոնային ձևաչափով*	**15.08.2023 – 15.09.2023**
	Չորրորդ փուլ՝ *աշխատանքների ընտրություն*	**15.09.2023 – 25.09.2023**
	Հինգերորդ փուլ՝ *բնօրինակ աշխատանքների հավաքագրում*	**01.10.2023 – 15.10.2023**
	Ցուցահանդես	**2023-2024թթ. Գեղագիտության ազգային կենտրոնի ամանորյա ծրագրի շրջանակում**

Հավելյալ հարցերով կարող եք դիմել.

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 60 833-383 կամ +37499 527114
Էլ.փոստ. nca.contemporary@gmail.com

Կայքէջ. www.nca.am
Facebook. Henrik Igityan National Centre for Aesthetics

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.
հեռ. +374 10 599-647
Էլ.փոստ. alvina.eloyan@escs.am
Կայքէջ. www.escs.am